ՀՈԿՏ. 13-Ի ՅՕԲԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԳԱՏԱՐՈՒՄԸ

Որոշումն.

1) Համարել մի ամբողջ տարի, այն է 1912 թ. հոկտ. 13-ից մինչև 1913 թ. հոկտ. 13 ը, յոբելեանական տարի, ի յիշատակ հայ գրերի գիւտի 1500-ամեակի և և հայ տպագրութեան 400 ամեակի։

2) Յոբելեանի բացումը կատարել հանդիսաւորապէս առաջիկայ հոկտ. 13 ին, ս. Թարգմանչաց տօնի օրը։

3) Յոբելեանի հանդիսաւոր փակումը կատարել 1913 թ. հոկտ. 12-ին, դարձեալ ս. Թարգմանչաց տօնի օրը, հրաւիրելով հանդէսին բոլոր նշանաւոր հայագէտներին, բանասէրներին, առանց դաւանութեան խտրութեան, ինչպէս և օտարազգի նշանաւոր հայագէտներին, նաև ազգային բոլոր կրթական, լուսաւորական, բարեգործական, գիտական ու կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչներին։

4) Ամբողջ տարուայ ընթացքում կատարել հանգանակութիւն յօգուտ դպրոցական ֆոնդի, բան առանձին հրահանգի, որ կը մշակուի՝ հանգանակութեան թոյլտուութիւնը Փոխարքայից ստանալուց յետոյ։

5) Ամբողջ տարուայ ընթացքում յարաբերութեան մէջ մտնել բոլոր հաստատութիւնների հետ, որպէս զի 1913 թ. հոկտ. 13-ի հանդէսը լինի արդարև համաժողովրդական և համազգային։

Այս որոշումը հաստատել է Ամենայն Հայոց Կաթողիկոսից։

Էջմիածնից դուրս լինելիք տօնակատարութիւնը և Էջմիածնում կատարուելիք հանդէսները.

ա) Էջմիածնից դուրս տօնուելու է այսպէս.

1) Բոլոր եկեղեցիներում սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 7 ին, կիրակի օրերը, նախօրօք ծանուցում անել ժողովուրդին հոկտեմբերի 13—14 ին կատարուելիք հանդէսների մասին։

2) Հոկտեմբերի 13-ին, շաբաթ, ս. Թարգմանչաց տօնի օրը՝ հանդիսաւոր պատարագ մատուցանել և քաղաքի մէջ բացատրել երկու մեծ տօների պատմական նշանակութիւնը, դրուատելով ս. Մեսրոպի, ս. Սահակի, ս. Թարգմանչաց և տպագրութեան արուեստի դլխաւոր վաստակաւորների յիշատակը։

Պատարագից յետոյ հոգեհանգիստ հայ գրականութեան և տպագրութեան վաստակաւորների համար։

Պատարագին և հոգեհանգստեան ներկայ են լինելու եկեղեցական, դպրոցական և ազգային հաստատութիւնների ներկայացուցիչներն ու վարչութիւններն ամբողջ կազմով աշակերտութեան հետ։

3) Հոկտեմբերի 14-ին, կիրակի, հանդիսաւոր պատարագ և ապա Հայրապետական մաղթանք նոյն կազմով։

Պատարագից յետոյ, ցերեկը կամ երեկոյեան՝ տեղական յարմարութեան համաձայն՝ կատարուում է դպրոցական հանդէս եկեղեցական, կրթական և այլ ազգային հաստատութիւնների պաշտօնատար անձանց ներկայութեամբ։ Հանդէսը բացւում է «Հայր մերով» և «Ընմանեալ Մովսիսի» Թարգմանչաց չարականով։ Լինում են պատշաճ բանախօսութիւններ տօնի նշանակութիւնը բացատրող, մէջ ընդ մէջ ոտանաւորներով, երգերով և նուագածութեամբ՝ ուր հնարաւոր է։

Հանդիսի սկզբում կամ վերջում աշակերտութեան ձրիապէս բաժանւում են Մայր Աթոռի այդ առիթով հրատարակած հանրամատչելի գրքոյկները։ Դպրոցական վարչութիւնները կարող են իրենց կողմից ևս յարմար նուէրներ, գրքեր, պատկերներ տալ սաներին։

Ծանօթ.—Շատ եկեղեցիներ ունեցող կենդրոններում եկեղեցական հանդէսները կարող են կատարել մի կամ մի քանի եկեղեցիներում հոգևոր վարչութեան կարգադրութեամբ։

բ) Էջմիածնում տօնուելու է հետեւեալ ձեւով.

Ուրբաթ, հոկտեմբերի 12 ի երեկոյեան Նորին Վեհափառութիւնը հանդիսաւոր թափօրով իջնում է Մայր Տաճար, ուր տեղի կունենայ նախատօնակ ս. Թարգմանչաց յիշատակին։

Շաբաթ (ս. Թարգմանչաց տօնին՝ հոկտեմբերի 13) հանդիսաւոր գնացք Նորին Վեհափառութեան յՕշական՝ ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և պատգամաւորութիւնների։

Պատարագ ս. Մեսրոպի դերեզմանի վրայ։

Հայրապետական մաղթանք։

Պատարագից յետոյ պատգամաւորների բանախօսութիւններ, հեռագիրների և ուղերձների ընթերցում ս. Մեսրոպ եկեղեցու բակում։

Կիրակի, հոկտեմբերի 14-ին, Մայր Տաճարի Իջման տեղանի վրայ հանդիսաւոր պատարագ, ապա հոգեհանգիստ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։

Նոյն օրը պատարագից յետոյ կը լինի ցերեկոյթ երաժշտութեամբ և երգեցողութեամբ։

Շաբաթ և կիրակի երեկոները հրավառութիւն և երաժշտութիւն Վանքի և Ճեմարանի բակում։

Ծանօթ.—Դպրոցական ֆոնդի համար ժամանակին կը լինի առանձին կարգադրութիւն։

ԻՆՉՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՕՐՄԱՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ԹԵՐ ԵԼԱԻ

Զորս տարի առաջ, երբ սահմանադրութիւն հռչակուեցաւ և հաւասարութիւն, եղբայրութիւն, ազատութիւն, արդարութիւն խօսքերը տարածուեցան, հայ ժողովուրդը կարծեց, որ հաւասարութիւն, եղբայրութիւն, արդարութիւն՝ ազատութիւն պիտի վայելէ և կեանքի, պատուի, ինչքի ապահովութիւն պիտի գտնէ։

Յետ. կուսակցութիւնները զէնքերնին վար դրին, լեռներէն վար իջան և սկսան համբուրուիլ երեկուան թիւրքերուն հետ իսկ։